

Դ Ա Ս Ը.

Հ Ե Ր Մ Ա Ս Ե Ի Ո Ն Ե Ս Ի Մ

Տրամախոսութիւն ի Ղուկասու. Թ. 43—56 :

Հերմաս (հարտաւլ) . — Իրաւ որ շատ սաստիկ է :

Ոնեախմ . — Ի՞նչ է, Բայց ի՞նչ հարկէ և ի՞նչ . — Ի՞նչ է, որ շատ սաստիկ է :

Հերմաս . — Այս մարդոց անմըտութիւնն :

Ոնեախմ . — Ի՞նչ մարդոց վերայ կը խօսիք :

Հերմաս . — Կը ցաւիմ ասել Առաքելոց վերայ :

Ոնեախմ . — Առաքելոց վերայ, բայց կը յուսամ թէ մէկ յետ Պենտեկոստէին կամ Հոգեգալստեան :

Հերմաս . — Ո՛հ, բայց դիցուք թէ Պենտեկոստէէն առաջ է, մի թէ օրինաւոր է :

Ոնեախմ . — Եթէ Պենտեկոստէէն առաջ է, այսինքն քանի որ Աստուածային Հոգւոյ շնորհաց ճառագայթն ցղացած չէ խաւարի մէջ — Հոգւոյ մը թուծեան մէջ — ես չեմ դատաւարուեր նոյա անմտութիւնն, յիշելով Ս. Պօղոսի խօսքն . « Մինչ տղայն էի՝ իբրեւ զտղայ խօսէի, իբրեւ զտղայ խորհէի, իբրեւ զտղայ համարէի » . Ա. Կորն. ԺԳ. 11 :

Հերմաս . — Բայց խօսքն տղայութեան վերայ չէ, այլ անմտութեան : Ամենէն հասարակ մարդն, նոյն իսկ անհաւատն անգամ այնպէս չը խօսիր ու դատեր, ինչպէս Առաքեալք կը խօսին և կը դատեն : Լաւ միտ դիւր, ահա՛ կը կարդամ Ղուկասու Թ. 43—56 համարներն :

Ոնեախմ . — Կարդա՛, որ կարողես նախք պարունակութեան խորն թափանցել և այնպէս խօսիլ :

Հերմաս . — Լսէ՛, լաւ լսէ՛ . « Եւ զարմանային ամենեքեան ի վերայ մեծամեծացն Աստուծոյ, և ի զարմանալն ամենեցուն ի վերայ ամենայնի՝ զոր առնէր, ասէ ցաշակերտան իւր . Դիք դուք ի լսելիս ձեր զբանս զայստիկ . զի Որդի մարդոց մատնելոց է ի ձեռս մարդկան : Եւ նոքա ոչ գիտէին զբանն, և էր ծածկեալ ի նոցանէ, զի մի գիտասցեն, և երկնչէին հարցանել ցնա վասն բանին այնորիկ :

« Եմուտ խորհուրդ ի նոսա՝ թէ ո՞րքեօք մեծ իցէ ի նոցանէ : Յիսուս իբրեւ ծանեալ զխորհուրդս սրտից նոցա, առ մանուկ մի՛ կացոյց ի մէջ նոցա առ իւր, Եւ ասէ ցնոսա . Որ որք ընկալցի զմանուկս զայս յանուն իմ՝ զիս ընդունի, եւ որ զիս ընդունիցի՝ ընդունի զառաքիչն իմ . զի որ փոքրիկն է յամենեանն ի ձեզ՝ նա եղիցի մեծ :

« Պատասխանի ետ Յովհաննէս՝ և ասէ . Վարդապետ, տեսաք զոմն որ յանուն քո դեւս հանէր՝ և արգելաք զնա, զի ոչ չըջի ընդ մեզ : Ասէ ցնոսա Յիսուս . Մի արգելաք, զի որ ոչն է ձեր թշնամի՝ ի ձեր կողմն է :

« Եւ եղև ի կատարել աւուրց վերանալոյ նորա՝ և ինքն զերեսս հաւտատեաց երթալ յերուսաղէմ : Եւ առաքեաց հրեշտակս առաջի երեսաց իւրոց՝ և իբրեւ չըբան՝ մօլն ի գիւղ

մի Սամարացւոյ՝ պատրաստել ինչ նըմա : Եւ ոչ ընկալան զնա (Սամարայի), զի գէմ եղեալ էր նորա երթալ յԵրուսաղէմ : Իբրեւ տեսին աշակերտքն Յակովբոս և Յովհաննէս, ասեն . Տէր, կամիս, զի ասասցուք, եւ իջցէ հուր յերկնից՝ և սատակեացէ զնոսա, (որպէս արար Եղիա) : Դարձաւ սաստեաց ՚ի նոսա և ասէ . Ո՛չ գիտէք՝ որոյ հոգւոյ էք դուք : Զի Որդի մարդոյ ոչ եկն զոգիս մարդկան կորուսանել՝ այլ կեցուցանել . և զնացին յայլ գիւղոյ :

Զէս զարմանար, չէս չիօթիր սոյն անմոռութեան վերայ : Ի՞նչ ամօթ :

Ոնեպիմ . — Ո՛չ կը զարմանամ և ոչ կը չիօթիմ . այլ միայն կը տեսնեմ որ մութ կը թուի ձեզ, ինչ որ պարզ է . . . եւ ըստ իս . . . :

Հերմաս . — Ի՞նչ, միթէ կարող ես դու ՚ի դերեւ հանել սոյն ծանր իրողութիւնն և արգարացնել Առաքեալներն : Հաւատա՛, որ դժուարին խընդիր է այս :

Ոնեպիմ . — Դժուարին չէ ամենեւին, պէտք է միայն լաւ խորհիլ եւ հաւատալ : Ես քաջ գիտեմ, սիրելի բարեկամ, որ դուք եւս կը սկսիք այնուհետեւ ինձ պէս խօսիլ : Այժմ՝ դուք չիօթուած եւ տարակուսած կ'երեւիք, ոչ միայն մի, այլ երկու կէտերու վերայ :

Հերմաս . — Շատ լաւ, փարատէ տարակուսանքս, իմ ուղածս իսկ այդ է :

Ոնեպիմ . — Ես գիտեմ, շատ լաւ գիտեմ, և պատրաստ եմ ձեր տարակուսանքն փարատել, այնպէս որ դուք եւս գոհ լինիք : Ինչպէս կ'երեւի, դուք տակաւին չք գիտէք թէ մինչեւ ո՞ր կարող է հասնիլ բնական մարդոյ եւ նոյն իսկ մի պարզ քրիստոնէի կուրուծիւնն : Դուք լոկ բնական մարդոյ սխալմունքն կամ մոլորութիւնն հնա-

րաւոր կը համարիք, եւ այնպէս կը կարծէք՝ թէ քրիստոնէի իմաստութիւնն կամ հոգեւոր կարողութիւնն անսահման է : Իսկ ես կ'ասեմ ձեզ, որ առաջինն աւելի անմիտ է, և երկրորդն ձեր կ'արձածէն աւելի սխալահան :

Հերմաս . — Առաջնոյն վերայ վիճել հարկ չ'է, համամիտ եմ ձեզ : Աստուած հոգիներու եւ մտքերու լոյսն է . ով որ Աստուծոյ հետ չը քայլեր, խաւարի մէջ կը քայլէ . ամեն անկում կը պատահի այն ճանապարհին վերայ, ուր ոչ մի լուսոյ նշոյլ չը ճառագայթեր : Եւ այս Աստուծոյ յատուկ ջերմորէն է, որ ամենեքեան չ'են անկաշիր ՚ի խորխորատ : Երկար ժամանակէ, որ այս տեսակ բաներու վերայ ես աւմենեւին չ'եմ զարմանար : Զեմ զարմանար մանաւանդ մեր Տիրոջ ժամանակակից մի Հրէի բարոյական չարութեան եւ անմոռութեան վերայ : Փաշիսցիք եւ Սագուկեցիք, Դպիրք եւ Վարդապետք օրինաց, կարծես թէ ամեն ճիգն կը թափեն, ամեն խելք ու միտք գործ կը դնեն, որ աւելի ցոյց տան իրենց յիմարութիւնն : Բայց մտածեցէք, որ այս տեղ ինդիրն Առաքելոց վերայ է, որոնք Յիսուսի Քրիստոսի իմաստութեանն վկայ էին, նորա վարդապետութեանց շարունակ ունէրնդիր էին եւ որոց ինքն ասած էր . « Զեզ տուեալ է գիտել զնորհուրդս արքայութեան երկնից և նոցա չէ տրուեալ » . Մատթ. ԺԳ. 11 : Այս փառաւոր ընտրութեան եւ նշանաւոր աբսոյութեան հետ ի՞նչպէս կը համաձայնեցնէք այն ցած մտածմունքներն, այն կոպիտ զգացմունքներն, զորս կ'արտայայտեն նոքա այնպիսի մի փափուկ վայրկենի մէջ, այնպիսի մի խորհրդաւոր իօսսակցութեան մէջ, որ մարդոյ զայրոյթն կը շարժի երբ կը կար-

դայ: Միթէ առաւել քան զայս մըլար
անմտութիւն կը լինի. միթէ առաւել
քան զայս ծանր սխալմունք կը լինի:
Կարճ խօսքեր են, բայց գիտէք թէ
որչափ կը հակառակին Աւետարանի
ողջոյն. որչափ վեր ՚ի վայր կը ցնցեն
Աւետարանի վարդապետութիւնն: Կը
տեսնէք թէ ինչպէս անհոգ են իրենց
Վարդապետին համար, ինչպէս ան-
տարբեր են ճշմարտութեան համար,
ինչքան կը մտածեն և կը հոգան ի-
րենց համար, ինչքան աններողամիտ
են այլոց համար, կարճ ասէնք, կը
տեսնէք, թէ ինչքան մոլեռանդ են և
միանգամայն անտարբեր: Միթէ այս
ամենն տեսնողն չը զարմանար, չը ցա-
ւիր, չը գայթակղիր: Ի՞նչ ուսած են
ուրեմն աշակերտներն իրենց Վարդա-
պետի դպրոցին մէջ: Ի՞նչ օգուտ քու-
ղած են իրենց շնորհուած անհամե-
մատ արտօնութիւնէն, որուն ամեն ոք
կը փափաքի անձկանօք, ի՞նչ շահ ե-
ղաւ նոցա Յիսուսի մարդասիրութիւ-
նրն, որ կամեցաւ միշտ իւր հետ ու-
նենալ թէ՛ ծովու և թէ՛ ցամաքի վե-
րայ. նոցա առջեւ բժշկեց, նոցա առ-
ջեւ աղօթեց և սիրեց: Ի՞նչ շահեցան,
քանի որ կը տեսնուի, որ աչք ունեցած
են եւ տեսած չեն, ականջ ունեցած
են՝ և լսած չեն և բերան ունեցած են
միմիայն անիմաստ խօսքերով իրենց
Վարդապետն փտացնելու համար. ես
չ'եմ զարմանար, որ Յիսուս աղաղա-
կեց մի անգամ. « Մինչեւ յերբ եղէց
ընդ ձեզ՝ եւ անսպցեմ ձեզ »: այլ կը
զարմանամ՝ թէ ինչպէս այնքան ժա-
մանակ համբերեց նոցա խօսածներուն
և արածներուն:

Ո՞նեւիմ. — Սիրելի բարեկամ, դուք
շատ խստասպահանջ էք և խստասիրտ:
Սակայն այնպէս պիտի անեմ, որ դուք
ինքնին ձեր առարկութեանցն պատառ-
խանէք: Եթէ մտածէք, իսկոյն պիտի

ասէք, որ Յիսուս արդարեւ իրաւունք
ունէր իւր աշակերտներուն անսալ,
ներել և իւր մօտ պահել և այնպիսի
իրաւունք, զոր դուք կարող չէք ձա-
նալ: Պիտի ասէք, որ աշակերտաց
համար, (որոնք որոշուած էին իրենց
Վարդապետի ուսումն երկրիս վերայ
շարունակելու) փոքր բան չ'էր նոյն
ուսմանց և վարդապետութեանց ինք-
նին ունկնդիր լինիլ: Պիտի ասէք, որ
սոյն ուսմունքներն մի անգամ նոցա
յիշողութեան մէջ թաղուելով և ըստ
երեւութին մեռնելով, ինչպէս հատն
ցորենայ կը մեռնի հողի մէջ ձմերուտն
ամիսներուն մէջ, պէտք է անշուշտ
գարնանային արեգակով (աստուածա-
յին շնորհաց արեգակով) հողէն ելնե-
լն և իրենց երկար ժամանակ ծածկը-
ւած կեանքն յայտնէին աշխարհի: Պի-
տի ասէք, որ Յիսուսի հետ կենակցե-
լու և նորա խօսքերն լսելու յիշատակն
կենդանանալով և սրբագործուելով ՚ի
ձեռն Հոգւոյն Սրբոյ պէտք է նոցա
սիրտն լցնէր մի քաղցր և կենդանարար
ջերմութեամբ և պէտք է ամենուն հա-
մար լինէր մի անգին ժառանգութիւն:
Պիտի ասէք, որ Յիսուսի Քրիստոսի կեան-
քըն, ինչպէս և նորա յարութիւնն, կը
պահանջէր վկաներ, նորա խօսքն կը
պահանջէր արձագանք, նորա բնուե-
րութիւնն՝ մի ճիշդ և կենդանի նմա-
նութիւն, եւ այս նկատմամբ մարդոյ
Որդւոյ ընկերակցաց յիշատակն մի կա-
տարեալ ճոխութիւն է Եկեղեցւոյ:
Վերջապէս պիտի ասէք, որ նոքա ա-
նուս մնացած չեն, այլ անտարակոյս
բան մի ուսած են:

Պիտի ասէք, որ շատ անգամ սը-
տութիւնն կը խառնուի ճշմարտու-
թեան հետ: Պիտի ասէք, որ արեգակն
աստիճան առ աստիճան կը բարձրա-
նայ հոգւոյ հորիզոնին վերայ, ինչպէս և
երկրիս հորիզոնին վերայ: Պիտի ասէք,

որ Առաքելաբ ուսած էին վստահիլ իրենց Վարդապետին, կը սիրէին իրենց վարդապետն, եթէ ոչ հոգեւոր սիրով, որ բաւանդակ սիրան կը վերանորոգէ, գէթ մտերմական և անկեղծ սիրով: Պիտի ասէք, որ արդարեւ եթէ մի և նոյն Առաքելաւորն երկու տարբեր ժամանակի մէջ նկատենք եւ համեմատենք, կ'ապշինք իրենց տգիտութեան և խտրասրտութեան վերայ յառաջքան իրենց Վարդապետի յաբուութիւնն և յառաջքան Հոգւոյ Սրբոյ գալուստն, բայց եթէ իրենց հայրենակցաց հետ համեմատենք աւելի կը դգանք իրենց արժանաւորութիւնն, վասն զի իրենք կ'ընդունին, բայց իրենց հայրենակիցքն կը մերժեն և չեն ճանաչեր զՅիսուս Քրիստոս: Այս համեմատութիւնն աւելի կը պարզէ խնդիրն, և դուք սիրելի Հերմաս, այն ժամանակ Առաքելաւորն պայծառ կողմէն կը տեսնէք, մինչդեռ խաւար կողմէն միայն կը տեսնէիք: Տարակից չունիմ, որ այս ամենն դուք պիտի ասէք ինքնին, բայց կը թողում այս, կը թողում առ այժմ ձեր խիստ դատաստանին, և կը հրաժարիմ ներելէ կամ արդարաւ ջննելէ: Ես եւս կամիմ այն աչքով տեսնել, որով դուք կը տեսնէք այժմ: Եւ ոչ միայն այսքան, այլ նաեւ ուրախ եմ, որ նոքա ինքնին կը մասնուին, ինքնին կը յայտնուի նոցա խղճութիւնն իրենց աւանդած պատմութեան մէջ, Վերջապէս ուրախ եմ, որ բնական մարդն կ'երեւի իւր բոլոր մերկութեամբ և տհասութեամբ:

Հերմաս. — Լաւ բացատրէ՛ միտքդ:

Ոմենիմ. — Կը բացատրեմ: Առաքելոյ օրինակն մեզ կ'ուսուցանէ՝ թէ որչափ հեռի էին մարդիկ ուղիղ մտածութեան եղանակէն, որչափ անձանթ էին երկնային Վարդապետի ոգւոյն և մտածութեան և թէ ինչ մեծ զօրու-

թիւն գործ դրաւ Յիսուս իւր աշակերտաց սիրան կրթելու համար, վասն զի նախ Յիսուս՝ և ապա իւր աշակերտներն աւանդեցին մեզ ամեն տեղեկութիւններ և կենդանի օրինակներ, որով կը դատեմք այժմ ամենայն խտրութեամբ նոցա վարքն ու խօսակցութիւնքն՝ յառաջքան նոցա մտաց վերանորոգումն Հոգւոյն Սրբոյ Գալուստան զօրութեամբ: Մինչեւ Հոգւոյն Սրբոյ Գալուստն, թող ներուի մեզ ասել, նոքա կը պատկանէին տակաւին անհասարկ և խիւր աղբիւն. Ղուկ. Թ. 41: Նոքա կը պահպանէին տակաւին նոյն աղբի վարքն ու բարքն եւ կը խօսէին նորա լեզուն: Յիսուս Քրիստոս պէտք է առ ինքն յգէր իւր աշակերտներն և ժողովք իւր Եկեղեցին, իւր Բարձրապետն զինի, Յով. ԺԲ. 32. այսինքն անխճեալ փայտի վերայ խաչուելէն զինի: Յիսուսի հոգեւոր զօրութեան և կարողութեան առատութիւնն խաչուելէն զինի պիտի սփռւէր ինչպէս Առաքելոյ, նոյնպէս եւ բոլոր աշխարհի վերայ: Վասն զի ինչպէս Վարդապետն, նոյնպէս եւ իւր Աշակերտներն տկարանալով պիտի զօրանային, «Յորժամ տկարանամ, յայնժամ զօրանամ»: Բ. Կորն. ԺԲ. 10. Աշակերտաց լեզուն եւ զգացմունքն պէտք չէ որ զսրմանալի թուին ձեզ: Աւելի ուրախ պիտի լինինք, որ Աշակերտաց, յառաջքան Պենտեկոստէն, ունեցած տիպն ու տիպարն, խորհուրդն ու դատողութիւնն ճշտութեամբ և հաւատարմութեամբ սրահպանուած է: Փոխանակ գայթակղելու՝ օգուտ քաղեցէք Աշակերտաց օրինակէն և այն պատմութիւնն, զոր այժմ կ'արդացիք, համարեցէք իբրեւ մի հայելի և ամեն ժամանակ մէջը նայեցէք:

Հերմաս. — Կը խոստովանիմ, որ չեմ հասկնար ձեր միտքն: Ինչ որ լինիմ ես, կարող չեմ իմ դէմքս տեսնել

գոյն հայելոյն մէջ և ոչ մի բրիստոն
նեայ կարող է տեսնել: Այն սկզբունքն,
որով մէք կը դատապարտեմք Յիսուսի
Քրիստոսի աշակերտներն, սկզբնական
տարերք են, Քրիստոնէութեան Ա և Բ
են եւ յետին աստիճանի բրիստոնեայ
անգամ չէ, ուր կը մտածէ և կը դգայ,
ինչպէս կը տեսնենք որ կը մտածեն և
կը դգան աշակերտներն:

Ոմելիս . — Բարեկամ, դուք շատ կը
պաշարիք ձեւերով և ժամանակի տար-
բերութիւնն ամենեւին 'ի հաշիւ չէք
առնուր: Աշակերտներն թէ' կարծր են
և թէ' փափուկ, թէ' խիստ են և թէ'
մեղմ, ոչ կը կեղծեն և ոչ կը ժուժկա-
լեն. չը գիտեն ինչ որ մենք գիտենք և
չեն դգուանար իրենց անձին: Մենք
կը դգուանանք. մենք շատ լաւ գիտենք
թէ' ուր և ինչ պէտք է խօսիլ և ուր
պէտք է լռել: Այսօրուան օրս բնա-
կան մարդն կը կեղծաւորի, կը դիմա-
կաւորի և ոչ միայն ուրիշներն կը պատ-
րէ, այլ նախ և առաջ զինքն կը խա-
բէ. պէտք է ձեւի մէջէն հիմունքն
տեսնել, խոր թափանցել և իրն այն-
պէս նկատել: Աւետարանն իսկ կ'օգնէ
մեզ ճանաչել հին մարդն նոր մարդոյ
հանդերձից և կերպարանաց ներքեւ,
և այն ժամանակ աշակերտաց մէջ աւ-
ներեւ տեսնուած բնութեան ապա-
կանութիւնն՝ նշմարել կը տայ մեզ մեր
սեփական վիճակն:

Սոյն վայրկենէն իսկ կարող ենք փոր-
ձել այս բանն: Նկարագրեցէք դուք
աշակերտներն այն սողերուն համե-
մատ, որոնք ձեր սիրտն պղտորած և
միտքն մթացուցած են և թողէք ինձ
որոնք նոյնանման օրինակներ:

Հերմաս . — Ուր կարող էք որոնել:

Ոմելիս . — Եթէ լէք ինձ, ինքնին
կարող էք ասել:

Հերմաս . — Ձեր առաջարկած պայ-
մանն դիւրին է. բայց շատ անորոշելի չէ:

Ոմելիս . — Այն պայմանն որ ինձ
կը վերապահեմ եւս առուել անա-
խորժ է. դուք կարող էք վերջն ինքնին
դատել: Սկսեցէք ձեր պարտքն կատա-
րել. դուք դատապարտեցիք, կը մնայ
ձեզ հաւանեցնել:

Հերմաս . — Ես կը կատարեմ պարտքս
և կը հաւանեցնեմ, բայց ցաւօք սրտի:
Ես չեմ սիրեր ամենեւին սխալման մէջ
գտնել այս մեծ մարդիկն . . . որոնք
մեծ են իրենց կատարած պաշտօնով
եւ աւելի մեծ իրենց սրբութեամբ:
Բայց սոյն վայրկենին մէջ ոչ մեծ են
նոքա և ոչ սուրբ, պէտք է որ ուղիղ
խօսիմ: Նոքա նոյն իսկ չափազանց գը-
ւեհիկ են: Ուստի' կը դան: — Թափօր
լեռնէն, ուր վկայ եղան նոքա իրենց
Վարդապետի փառացն: Երկնից դու-
ռն, այսպէս ասենք, բացուեցաւ նոցա:
Անցեալ, ներկայ և ապառնի միացան
նոցա աչաց առջեւ սուրբ լեռան վե-
րայ: Ամեն ժամանակներ միացան 'ի
մի և լուսոյ մէջէն որոտացող Աստուծոյ
ձայնն առաջուց մի ճաշակ տուաւ նո-
ցա յաւիտենականութեան: Լեռնէն
ցած, յանձն մի անբաղդ և միամօր
մանկան, երեւեցաւ նոցա սեպհական
բնութեան թշուառութիւնն, որպէս
զի փայլի մարդոյ Որդւոյ զօրութիւնն
ու բարութիւնն: Բազմութիւնն, իւր
ազազակներով, օրինակ կը տայ նոցա
հաւատոյ՝ և նշան երկրպագութեան:
Տէս, թէ կը հետեւի'ն նոքա այս օրի-
նակին. տէս թէ կը հասկնան նոքա
այս նշանն:

Յիսուս Քրիստոս, որ չը կամիր, որ
Առաքեալներն այլ ընդ այլոյ իմանան
կամ պատրին նոյն պահուն կատարուած
յաղթանակէն, կ'ասէ. « Կը լսէք սոյն
ազազակներն »: Այս ազազակներն,
այս բարբառներն լի են զարմացմամբ
և յարգանքով առ իս, և նոքա, որք կ'ար-
տասանեն, թուի թէ յաւիտեան իմ

հողմն անցած են : Այս չ'արգելուր , որ «Մարգար Որդի» չը մատնուի 'ի ձեռքս մարդկան » : Ի՞նչ մարդկան : — Թերեւս նոյն իսկ այս աղաղակող մարդկան : Այսքան ահա՛ անհաստատ կը կարծեմ ես միամօր մտնկան բժշկութեան հրաշք տուաւորութիւնն նոյա վերայ : Եւ գիտէք , թէ ի՞նչ կը նշանակէ անկանիլ 'ի ձեռս մարդկան , Գաւթիթ ամեն պատուհաս յանձն կ'առնուր , որ ուղղակի Աստուծմէ կը գար , բայց կը սոսկար անխելի 'ի Երուսաղէմ . Սալ . ԻԳ . 14 . Եթէ ասուած է թէ՛ «Ահ մեծ է անկանիլ 'ի ձեռս Աստուծոյ կենդանւոյ » . Եբր . Ժ . 31 . այս վերջին աւուր և վերջին հատուցման համար ասուած է , այս կենաց մէջ Աստուծոյ տուած պարզ պատիժներն միւս կենաց մեծ պատուհասներու տեղ կը բռնեն . վստի վի Աստուծոյ յայտնուիտ գերեզմանին իր պարգիւ , բայց յայնկոյս գերեզմանին իր պարգիւ : Բայց աշխարհիս վերայ ամենէն սոսկալին մարդկանց ձեռքն անկանիլն է : Արդ՝ այս է , որ պահուած է մարդոյ Որդւոյն՝ Սին պատճառ նա պէտք է մատնուի 'ի ձեռքս մարդկան . պէտք է որ այսպէս լինի , և ինչպէս որ , ոչ որ կարող չէ յափշտակել նորա ձեռքէն , զորս կը սիրէ նա , Յով . Ժ . 23 . նոյնպէս ոչ որ կարող չէ (քանզի Աստուծոյ թողած է) մարդոյ Որդին յափշտակել այն մարդկանց ձեռքէն , որք զինքն կ'ատեն :

Աշակերտներն ամենեւին չեն հասկընար այս բաներն և ես չեմ կամիր , որ հասկնան , բայց :

Ոմեսիս . — Ներեցէք ինձ ընդհատել ձեր խօսքն և ասել ձեզ՝ թէ իրաւունք ունիք , որ չէք կամիր , որ աշակերտներն հասկնան : Բայց երբ այս բանս կը ներուի նոցա , պէտք է որ ներուի ամեն բան : Վասն զի ամեն բան այս կետէն կը ծագի և կամ այս կէտով

կը բացատրուի :

Եթէ այս սխալմունքն ներուի , միւսներն ինքնին կը ներուին : Եթէ այս ճիշդ մարտութիւնն ըմբռնած և հասկցած լինէին աշակերտներն , մնացեալներն գիւրաւ կը հասկնային : Ով որ Յիսուսին կը հաւատայ միայն փառաւորուած ժամանակ՝ նա բան չը գիտէ . ով որ Յիսուսին կը հաւատայ խոնարհած , նախատուած և անարգուած ժամանակ՝ նա ամեն բան գիտէ : Համաձայնեցէք ինձ , որ այս այսպէս է այսօր , բայց առաջ եւս այլպէս չ'էր : Այս բան առ այս բաւական կը համարիմ : Ներեցէք , որ ընդհատեցի ձեր խօսքն , հաճեցէք ուրեմն շարունակել :

Հերմաս . — Պիտի շարունակեմ , բայց իմացէք , որ շատ յօժարութեամբ կընդունիմ նաեւ ձեր գիտողութիւնն : Լաւ գիտեցէք , կը խնդրեմ , թէ արդեօք աշակերտներն կարօտութիւն ունէին խաչի խորհուրդն հասկնալու , որ այն ցաւալի խորխորատին մէջ չ'անկանէին , ուր այժմ՝ կը տեսնեմք ընկած :

Էս կ'ասեմ ուրեմն , որ աշակերտներն ինքնին հետախուզելով կարող չէին Յիսուսի Քրիստոսի առաջին խօսքն հասկնալ , որ խաչի խորհուրդն կը պարունակէր : Նոքա եթէ ինքնին հետազոտէին , ունայն պիտի լինէր իրենց ջանքն , բայց կարող էին իրենց Վարդապետէն հարցնել . կրդգուշանան իրենց անձին , չ'են հարցներ : Յիսուսի յանցաւոր դատուելու դաղափարն նոյոյ մտքէն 'ի վեր է . նոքա չեն կարող ըմբռնել և հասկնալ , նոքա կը թերահաւատին , բայց մի բան կայ որ շատ պարզ է նոցա համար Յիսուսի խօսքերուն մէջ , այսինքն փոխանակ մի հզօր և փառաւոր Տէր և Վարդապետ ունենալու , որուն կը յուսային իրենք ժողովրդի աղաղակներուն եւ յիմուութիւններուն նայելով , պիտի զիջանին

ունենալ մի հազարհազար և անարգեալ Վարդապետ : Նոքա կ'ուզէին տարա-
կուսիլ այս բանիս վերայ , նոքա կ'եր-
կնչէին իրենց միտքն սոյն գաղափարով
զբաղեցնել . նոքա ներքնապէս կըզգու-
շանան թերեւս կարծել , որ լաւ հաս-
կըցած չ'են , և այս պատճառաւ է , որ
չ'են ուզեր հարցնել իրենց Վարդապե-
տէն :

Ոնեալ . — Շատ խիստ էք դուք :
Մի այլ որ , փոխանակ այդպէս դատե-
լու , թերեւս պիտի ասէր՝ աշակերտաց
սաստիկ սէրն էր , որ իրենց բերանն
կը փակէր չքրքրել խաչի խորհուրդն ,
չը յուզել իրենց Վարդապետի փրտն ,
և եթէ չ'էին հարցներ , պատճառն այն
էր , որ կը գողային տեսնել դէմ յան
դիման իրենց Վարդապետի չարչա-
րանքն ու մահն , զոր այնքան կը սի-
րէին :

Հերմաս . — Ո՛հ , աշակերտներն ու-
րիշ բանով զբաղած են : Նոքա սկսած
են վիճել իրարու հետ : Եւ ի՞նչ բանի
վերայ կարող են վիճել սոյնպիսի մի
փափուկ վայրկենի մէջ : Եթէ իրենք
չ'իմացնէին մեզ (և հաւատացէք , որ
ամենէն աւելի ես կը զարմանամ սոյն
աղնիւ միամտութեան վերայ) ո՛չ որ
պիտի կարենար երեւակայել՝ ինչ բա-
նի վերայ որ նոքա կը վիճէին : Խնդիր
է իմանալ թէ իրենց մէջ ո՞վ է ամենէն
մեծն : Ա՛ռքեզ յարմար վայրկեան այս
պիտի վիճաբանութեան : Ի՛նչ զարմա-
նալի բան , սոյն խնդիրն կը յուզուի
այն Թափօր լերան ստորոտն , որ պահ
մի առաջ կը փայլէր փառօք Յիսուսի
Քրիստոսի : Այս առարկան կը բա-
ցուի այն վայրկենին , յորում Յիսուս
իւր չարչարանաց խորհուրդն կը յայտ-
նէ : Ա՛խ , ա՛խ , այս փափուկ պահուն
մէջ կը վիճեն թէ ո՞վ պէտք է ամենէն
մեծ լինի : Ինչո՞ւ չ'էք վիճեր , թէ ո՞վ
պէտք է ամենէն փոքր լինի : Այս կը

յարմարի ահա՛ ձեզ , ո՞վ աշակերտներ :
Այս կը պատշաճի ձեր խօսած ժամուն
և վայրկենին : Ահա՛ ձեզ պատեհ ժա-
մանակ . Զանազէք ձեր ո՞նչութիւնն
քննելու , զոր շուտով պիտի չը կարե-
նաք քննել և աւարտել :

Ոնեալ . — Իսկ մենք , օրեքի բա-
րեկամ , աւելի լաւ կը լինի , քննենք ,
որքան կարող ենք , Վարդապետի ի-
մաստութիւնն . քան թէ աշակերտաց
փոքրութիւնն : Զը մոռանանք որ սոյն
աւետարանական պատմութեան գլը-
խաւոր նպատակն է , աշակերտաց կու-
րութեան և խոտարտութեան առ-
թիւ , փայլեցնել Յիսուսի Քրիստոսի
ուղղութիւնն , բարութիւնն , անաչառ
արդարութիւնն և աստուածային ըզ-
գոնութիւնն , միով բանիւ այն ամեն
առաքինութիւններն , որոնք մի մի կա-
տարելութիւններ են : Ո՛րչափ քաղցր
է , եթէ աշակերտք Յիսուսի Քրիստո-
սի տուած դասին ուշադիր գտնուին :
Ո՛րչափ փափաքելի է , որ իրենց անձն
այն փոքրիկ մանկան տեղն դնեն , զոր
Յիսուս կը ներկայացնէ իրենց իբրեւ
պատկեր և տիպար ճշմարիտ երկրպա-
գուաց : Թո՛ղ գգուեն շտապաւ , գոնէ
հոգւով , քանզի մարմինն տկար է ,
Մաթ . ԻԶ . 41) Կրիկի տիտղոսն , որ
մեծ արժանաւորութիւն ունի մեր հեզ
Թագաւորին համար , ինչպէս որ ըստ
դատողութեան մարդկան վերջին կար-
ծուածն՝ առաջին տեղն ունի նորա սըր-
տին մէջ :

Հերմաս . — Այս մասին ես բոլո-
րովն համամիտ եմ՝ ձեզ , կը խորհիմ
և կըզգամ , ինչպէս դուք կը խորհիք և
կըզգաք : Բայց մի մոռանաք՝ թէ ի՞նչ
բանի վերայ է մեր բուն խնդիրն : Դուք
առիթ տուէք , որ այս խնդիրն ես բա-
ցի : Թէպէտ խօսելիքներ շատ կան ,
բայց այլ ժամանակի թողունք զայն .
ամեն բան իւր ժամանակն ունի : Իմ

բուն առարկան աշակերտներն են, իմ
դատու հոյս մասին է :

Ոնեւիմ . — Շատ լաւ , շարունա-
կէ , կը լսեմ :

(Շարունակելի :)



Ն Ա Մ Ա Կ

. . . խմբագիր ՍԻՕՆ պատուական
Հանդիսի .

Բարեհաճեցէք սոյն գրութիւնս
հրատարակել ՍԻՕՆԻ միջոցաւ 'ի լուր
Աղգայնոց :

Ի վաղուց անտի փափաք ունենա-
լով Ս . Տեղեաց շնորհքն վայելել՝ յա-
ջողեցայ այս անգամ Զմիւռնիայէն ու-
ղեւորիլ 'ի Ս . Երուսաղէմ : Սոյն պա-
տեհ առթիւ իջայ յԱղէքսանդրիա , ուր
տեսնուեցայ Յակոբեան Մեծ . Թադ-
ւոր Պէյին հետ , և անտի անցնելով
յԵփիպտոս , տեղւոյն Առաջնորդ Գեր .
Մեսրովք Արքեպիսկոպոսի շնորհիւ և
Արթ . Տէր Կարապետ քահանայի ըն-
կերակցութեամբ , ներկայացայ Վսեմա-
փայլ Նուպար Փաշային , որոյ հետ ու-
նեցած տեսակցութեանս բախտաւոր
միջոցին վստահացայ օգնութիւն խորն-
դրել Մաղնիսայի Ս . Լուսաւորիչ Ե-
կեղեցւոյն համար , որոյ շինութեան
տեսչութիւնն մեզ յանձնուած է , և
որ թէպէտ շնորհիւ և կարողութեամբ
Բարձրեղն յաւարտ հասած է , սակայն
կան տակաւին ինչ ինչ թերութիւն-
ներ , մանաւանդ գպրոցի մը շինու-
թեան նկատմամբ , որ խիստ կարե-
ւոր է :

Գարձանք մենք յԱղէքսանդրիա ,
ուր վերստին այցելութեան գնացինք
Մեծ . Թադւոր Պէյին , որոյ սակաւ
ինչ տկարութիւնն լսելով՝ 'ի տես եկած
էր նաև Վսեմ . Նուպար Փաշան , թէ
և իսպառ ապաքինուած էր հիւանդու-
թիւնն ողորմութեամբն Աստուծոյ :

Այս տեսակցութեան միջոցին Վը-
սեմ . Նուպար Փաշան որոշեց հարիւր
Գաղղ . ոսկի շնորհել 'ի նպաստ շի-
նութեան Եկեղեցւոյն Մաղնիսայի , և
իսկոյն Մեծ . Թադւոր Պէյն հաճեցաւ
նոյն դրամներն ղրկել 'ի Զմիւռնին յա-
նուն Մեծ . Յակովբ Առաքինասէր
Էֆէնտիի Եսայեան :

Ահաւասիկ բարեպաշտական գործ ,
որ արժանի է դուրսութեան և շնորհա-
կալութեան . գործ՝ որ արժանի է հը-
րատարակութեան յորինակ և 'ի քու-
ջալերութիւն այլոց :

Ուստի քաղցր պարտք համարելով
սոյն ուրախական տեղեկութիւնն Խըմ
բազրութեանդ հաղորդել ,

Մնամ աղօթապարտ Աղգիւս

24 Փետր . 1876 թի

Պետրոս Մ . Վ .

յԵրուսաղէմ :

Ներկարարեան :

